

թեան հարցը արդէն տեսականէ դէպի գործնական քայլեր կ'առնէր :

Ունիմ աչքի առջև Մովսէս արքեպիսկոպոսի եւ Սաչատուր եւ Արիստակէս վարդապետներու առ Ս. Ժողովն զբաժ թուղթին պատասխանը, որ թուական կը կրէ 18 Փետրուար 1628 : Այս պատասխանը զրուած է Մովսիսի, երբ նա էջմիածնի Լուսարար էր . իսկ Մովսիսի թուղթը պէտք է զրուած ըլլայ անոր երկրորդ անգամ Սպահան այցելութեան առթիւ : Ս. Ժողովին պատասխանն է .

Առ Մովսէս հայ արքեպիսկոպոս Մեծ եւ Փոքր Սիոնի, եւ առ եպիսկոպոսն հաչատուր եւ առ հայ վարդապետն Արիստակէս :

(Prop. Lettere volgari, an. 1628, vol. 7, f. 18.)

Ձեր Սրբութեանց թուղթը նկատի առնուեցաւ Հ. Տ. Ս. Ժողովէն, որ զուժարուեցաւ ի ներկայութեան Ս. Պապին Ուրբանոս Ը.ի. Նորին Սրբութեան եւ Տ. Կարդինալներուն շատ հաճելի եղան այն սէրն եւ բարեպաշտութիւնը, զոր դուք ի հանդէս կը բերէիք հանդէպ այս սուրբ, առաքելական Աթոռին :

Նկատմամբ այն կէտերուն, զոր դուք կը շօշափէիք Ձեր Նամակին մէջ, ի մասին մեր Ս. Հաւատքի վարդապետութեան, կը յայտնենք թէ Ասպահանի Բոկոսն Կարմեղեաններու մեծաւոր հայրը պիտի պարզէ Ձեր առջև Նորին Երջանկութեան եւ Ս. Ժողովոյ մտած-